

« Ե Ր Ե Վ Ա Ն Ի Ո Ս Կ Ե Ր Չ Ա Կ Ա Ն Գ Ո Ր Ծ Ա Ր Ա Ն » Բ Բ Ը

Ընթացիկ հաշվետվություն

2008թ. տարեկան ժողով

Հասցե	ք. Երևան 023, Արշակունյաց փ. 12
Հեռախոս	52-53-21,58-66-18
Ֆաքս	52-57-13
Ինտերնետ կայք	www.yeryewei.am

Սույն թվականի հունիսի 30 -ին տեղի ունեցավ «Երևանի ոսկերչական գործարան» ԲԲ Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը:

Ներկայացվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի կազմակերպման և վարման ժամանակ առաջացած հետևյալ փաստաթղթերը՝

1. Ընկերության տնօրենների խորհրդի 12.06.2009թ. կայացած նիստի արձանագրությունը (N 2Խ-09):

2. Տարեկան ընդհանուր ժողովի արձանագրությունը (N 2Ժ -09, 30.06.09թ.):

3. Հաշվիչ հանձնաժողովի N 1, N 2 և N 3 արձանագրությունները:

4. Գլխավոր տնօրենի Ընկերության 2008թ. գործնական վերաբերյալ հաշվետվությունը:

5. 2008թ.-ի գործնական ֆինանսական վերլուծությունը:

6. Վերստուգիչ հանձնաժողովի եզրակացությունը:

8. Բաժնետերերին բաժանված հետևյալ նյութերը՝

- ժողովի օրակարգը;
- Ընկերության 2008թ. տարեկան հաշվետվություն;
- Տնօրենների խորհրդի անդամության առաջարկվող թեկնածուների ցուցակը;
- Քվեաթերթիկի օրինակը:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2Խ-09

«Երևանի Ոսկերչական գործարան» ԲԲԸ տնօրենների խորհրդի
նիստի

ք. Երևան

12.06. 2009թ.

Ներկա են տնօրենների խորհրդի հետևյալ անդամները՝

Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՀ գործող օրենսդրության պահանջները ապահովելու նպատակով ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը պետք է կայանա մինչև ս/թ հունիսի 30-ը:

Այս կապակցությամբ որոշեցին՝

1. Ընկերության 2008թ. գործունեության տարեկան ընդհանուր ժողովը հրավիրել 2009թ. հունիսի 30-ին, ժամը 15.00, ընկերության դահլիճում:
2. Հաստատել «ԵՈԳ» ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի հետևյալ օրակարգը՝

- ՕՐԱԿԱՐԳ՝
1. Ընկերության 2008թ.գործունեության տարեկան հաշվետվության հաստատում:
 2. Ընկերության 2008թ. ֆինանսական գործունեությունը ամփոփող տարեկան հաշվետվության հաստատում:
 3. Ընկերության շահույթի և վնասի հաշվետվության հաստատում:
 4. Ընկերության վերահսկող հանձնաժողովի հաշվետվության հաստատում:
 5. Ընկերության 2009թ. ֆինանսական գործունեության աուդիտ իրականացնող անձի հաստատում:
 - 6.Տնօրենների խորհրդի անդամների ընտրություն:

Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 2Ժ -09

«Երևանի ոսկերչական գործարան» Բաց Բաժնետիրական
Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի,
կայացած 2009թ. հունիսի 30 -ին, ժամը 15.00

ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ` Ընկերության 10 348 896 տեղաբաշխված բաժնետոմսերի
սեփականատերերից թվով 8.360.159 բաժնետոմսերի
սեփականատերեր կամ նրանց լիազոր ներկայացուցիչներ
(80,78%) այդ թվում Ընկերության պետական բաժնեմասի
լիազոր ներկայացուցիչ Ներսես Երիցյանը:

Բաց քվեարկությամբ ժողովի նախագահ ընտրվեց տնօրենների խորհրդի
անդամ, նշանակալից սեփականատեր Էմիլ Գրիգորյանը, քարտուղար ընտրվեց Օ.
Ամիրյանը (միաձայն): Միաձայն ընտրվեց նաև հաշվիչ հանձնաժողովը, բաղկացած
երեք հոգուց` Պողոսյան Յեղիմե, Յովսեփյան Խանում, Սկրտչյան Մարինե:
Ժողովին ներկայացվեց հետևյալ օրակարգը.

- ՕՐԱԿԱՐԳ`**
1. Ընկերության 2008թ. գործունեության տարեկան հաշվետվության
հաստատում:
 2. Ընկերության 2008թ. ֆինանսական գործունեությունը ամփոփող
տարեկան հաշվետվության հաստատում:
 3. Ընկերության շահույթի և վնասի հաշվետվության հաստատում:
 4. Ընկերության Վերստուգող հանձնաժողովի հաշվետվության
հաստատում:
 5. Ընկերության 2009թ.-ի գործունեության ֆինանսական
արդյունքների աուդիտ իրականացնող անձի հաստատում:
 6. Տնօրենների խորհրդի անդամների ընտրություն:

Բաց քվեարկությամբ ժողովի օրակարգը հաստատվեց միաձայն:

Ընկերության 2009թ. գործունեության տարեկան հաշվետվությունը
բաժնետերերի ուշադրությանը ներկայացրեց Ընկերության գլխավոր տնօրեն
Գ. ԿԱՖՅԱՆԸ:

Իր ելույթում նա ներկայացրեց 2008թ. Ընկերության գործունեության համառոտ
նկարագիրը` նշելով այն տենդենցները, որոնք իրենց բացասական ազդեցությունն
ունեցան Ընկերության գործունեության արդյունքների վրա: Որպես Ընկերության
զարգացումն ապահովող ուղղություններ նշվեցին հետևյալները.

- 2009-2010թթ. հասնել տեսականու աճի` մինչև 150 տեսակ իրի, ըստ
շուկաների,
- 11 նոր մեդալների կոնստրուկտորա-տեխնոլոգիական մշակում և ներդրում,
- 3 տեսակի ժամացույցների մոդելների մշակում և ներդրում,
- Էլեկտրոնոգիոն հարգադրոշմների արտադրության իրականացում,

Օրակարգի 6-րդ հարցի՝ Ընկերության տնօրենների խորհրդի անդամների ընտրության համար որոշվեց ներկայացնել քվեարկության Ընկերության երկու բաժնետերերի՝ Էմիլ Գրիգորյանի և Գարիկ Յովհաննիսյանի թեկնածությունները, իսկ Ընկերության պետական բաժնեմասի (80%) երեք ներկայացուցիչների տվյալները կներկայացվեն մոտակա օրերին:

Տնօրենների խորհրդի անվանական կազմը քննարկումներից հետո դրվեց գումարային քվեարկության և ստացավ հետևյալ քանակությամբ ձայներ:

Էմիլ Գրիգորյան	կողմ՝	8.306.718
Գարիկ Յովհաննիսյան	կողմ՝	8.306.718

Համաձայն հաշվիչ հանձնաժողովի տվյալների նշված թեկնածուները ընտրվեցին տնօրենների խորհրդի կազմում: Ժողովը հաստատեց հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ

1. Ընկերության 2008թ. գործունեության տարեկան հաշվետվությունը հաստատել:
2. Ընկերության 2008թ. ֆինանսական գործունեությունը ամփոփող տարեկան հաշվետվությունը հաստատել:
3. Ընկերության 2008թ. շահույթի և վնասի հաշվետվությունը հաստատել:
4. Վերստուգող հանձնաժողովի հաշվետվությունը հաստատել:
5. 2009թ. -ի Ընկերության գործունեության ֆինանսական արդյունքների աուդիտ իրականացնող անձը որոշելու նպատակով հայտարարել մրցույթ:
6. Տնօրենների խորհուրդի անդամներ ընտրվել են հետևյալ անձինք՝

Էմիլ Գրիգորյան
Գարիկ Յովհաննիսյան

Ժողովի օրակարգը սպառվեց, և հայտարարվեց նրա փակումը:

ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Է. Գրիգորյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Օ. ԱՄԻՐՅԱՆ

Հաշվետվություն « Երևանի ոսկերչական գործարան» ԲԲԸ 2008թ.

տարեկան գործունեության վերաբերյալ

2008 թ. եղել է բավականին լարված աշխատանքային տարի և ունեցավ ցավոք իր բացասական արտահայտումները :

Հաշվետու տարում նախորդ 2007 թ. նկատմամբ գրանցվել է իրացումից հասույթի նվազում` 2007 թ. --- 1.082.663 հազ. դրամ
2008 թ. ---- 935.324 հազ. դրամ

Համախառն շահույթը կազմել է` 2007 թ. ----- 136.311 հազ.դրամ
2008 թ. ----- 90.325 հազ. դրամ

Եթե հիշում եք 2007 թ. մենք ունեինք այլ ցուցանիշներ`
Ունեինք իրացումից հասույթի աճ:

Համախառն շահույթը` 2007 թ. ---136.311 հազ. դրամ
2006 թ.--- 103.000 հազ. դրամ

2008թ. արդյունքով վնասը կազմել է 92.043 հազ. դրամ:

Սա այն բացասական արտահայտությունն է, որ ունենք 2008 թ. համար: 2008 թ. մենք գրանցեցինք վճարունակ պահանջարկի կայուն անկում արտաքին շուկաներում և այդ շուկաների համար մրցակցային պայքարի ծայրահեղ սրում: Սա ուղեկցվում էր ոսկու գնի անկանոն և մեծ ամպլիտուդայով տատանումների, ինչը կատվածահար էր անում մանրածախ առևտուրը: Այս իրավիճակը առավել արտահայտիչ է ներկայումս:

Ներքին շուկայում ստիպված էինք գրանցել ստվերային շուկայի շարունակվող բացասական ազդեցությունը` մեր արտադրանքը մնում էր ոչ մրցունակ գնային առումով:

Այս իրավիճակում մենք ձգտել ենք հնարավորին չափ պահպանել աշխատատեղերը` մեր մարկետոլոգների, կոնստրուկտորների, տեխնոլոգների, նկարիչ-դիզայներների, նմուշագործների տարիներով ձևավորված բարձր վարպետությունը և ինտելեկտուալ ներուժը, ակտիվ պայքար ծավալել ավանդական շուկաներում մեր դիրքերը ամրապնդելու ուղղությամբ:

Սա, իհարկե պահանջում էր զգալի ծախսեր, օրինակ իրացման ծախսերը 2008 թ. զգալի աճել են և կազմել են 43 782 հազ. դրամ, 2007 թ. 24 875 հազ. դրամի դիմաց:

Զգալի չափով այս աճը պայմանավորված է գովազդների և տոնավաճճերին մեր մասնակցությունն ապահովելու ծախսերով: Սա մեր ոլորտի ձեռնարկության գոյատևման և զարգացման պարտադիր պայմանն է:

Միաժամանակ մենք իհարկե ձգտել ենք աշխատել խնայողաբար և կրճատել ծախսերը:

Այսպես, եթե 2007թ. վարչական ծախսերը կազմել են 188.456 հազ. դրամ, ապա 2008 թ. կրճատվել են շուրջ 30.000 հազ. դրամով և կազմել են 158.042 դրամ:

Այս աշխատանքի որոշ դրական ազդակներ մենք տեսնում ենք ներկայումս՝ օրինակ 2009 թ. 5 ամսվա վնասը կազմել է 16.836 հազ. դրամ, 2008 թ. 21.533 հազ. դրամի դիմաց, իսկ մայիս ամսվա համար 2009թ. ունենք 2.857 հազ. դրամի վնաս, 2007 թ. 9.524 հազ. դրամի դիմաց:

Ինչ խնդիրներ մենք պետք է լուծենք որպեսզի կարողանանք ապահովել ձեռնարկության կայուն և ռիթմիկ աշխատանքը:

Ամենակարևորը - դա ավանդական շուկաների պահպանումն է և նոր շուկաների հայթհայթումն է: Սրա հետ կապված կուզենայի նշել, որ արտադրողները առևտրային ցանցին ոսկերչական իրերը որպես կանոն տրամադրում են վճարման տարեկետման իրավունքով, սա առավել ակտուալ է ներկայիս ֆինանսատնտեսական իրավիճակում:

Արտադրողներին էլ որպես կանոն տրամադրվում է կոնսիգնացոն եղանակով և շուկայական գնից ցածր գնով: Այստեղ մեծ է բանկերի դերը, հաշվի առնելով հեյջինգի (ապահովագրման) մեխանիզմի կիրառումը: Պետք է ձգտենք ներդնել այս մեխանիզմը, ներգրավել մեր բանկերին, իհարկե ՀՀ ԿԲ համակարգող դերակատարությամբ:

Այս աշխատանքի կիրառման համար անհրաժեշտ պայման է տեղական ոսկիարդյունահանող ձեռնարկությունների զարգացումը:

Մեր ներքին աշխատանքում պետք է ապահովենք մարքեթինգի ծառայության կողմից շուկաների մանրակրկիտ ուսումնասիրությունը և վերլուծությունը, հիմնվելով դրա վրա 2009-2010 թ.թ. հասնենք տեսականու աճի՝ մինչև 150 տեսակ իրի, ըստ շուկաների, 11 նոր մեդալների կոնստրուկտորա - տեխնոլոգիական մշակում և ներդրում, 3 ժամացույցների մոդելների մշակում և ներդրում, էլեկտրոնիկոն հարգադրողների արտադրության իրականացում, արտադրության դիֆերսիֆիկացիա, մասնավորապես ոչ թանկարժեք մետաղներից աքսեսուարների արտադրություն:

Եվ իհարկե, բոլոր դեպքերում, շուկայական տնտեսության պայմաններում, պետք է կարողանանք բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը, ապահովել ֆինանսական ներդրումների բարձր արդյունավետությունը, աշխատել խնայողաբար, ուստի միայն այս դեպքում կկարողանանք կյանքի կոչել մեր բոլոր պլանները:

ԸՆԿԵՐՈՒՅՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒՅՅՈՒՆ

Նկատի ունենալով 2008թ. «Երևանի Ոսկերչական գործարան» ԲԲԸ տարեկան ֆինանսական հաշվետվությունը, Ձեզ են ներկայացնում ընկերության 2008 թվականի ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ որոշ տվյալներ.

Ընկերության ընդհանուր ակտիվները հաշվետու տարվա վերջի դրությամբ կազմել է 4 565 840,0 հազ.դրամ, այդ թվում ոչ ընթացիկ ակտիվները 847 53,0հազ.դրամ, ընթացիկ ակտիվները՝ 3 718 287,0հազ.դրամ,որոնք կազմում են ընդհանուր ակտիվների համապատասխանաբար 18.56% և 81.44%-ը:

Ընկերության ընդհանուր գնումների գծով կրեդիտորական պարտավորության՝ այն է 745 097.0 հազ. դրամ, 99.80%-ը կազմում է Երևանի Ոսկերչական գործարան-1 «Գնունոն» ԲԲԸ-ին, իսկ Ընկերության նկատմամբ վաճառքների գծով դեբիտորական պարտավորության՝ այն է 2 419 959.0 հազ. դրամ, 94 87%-ը կազմում է ԵՈԳ-1 «Գնունոն» ԲԲԸ-ին:

2008 թվականի ընթացքում Ընկերության արտադրանքի, ապրանքների և ծառայությունների իրացումից հասույթը կազմել է 935 325.0 հազ.դրամ, նախորդ տարվա 1 082 663.0 հազ. դրամի դիմաց: 2008թ. Ընկերության իրացման ծախսերը կազմել են 43 872.0 հազ. դրամ, նախորդ տարվա 24 875. հազ. դրամի դիմաց, իսկ վարչականազարչական ծախսերը կազմել են 158 042.հազ. դրամ, նախորդ տարվա 188 456.0 հազ. դրամի դիմաց: Նախորդ տարվա համեմատ 43.3%-ով աճել են իրացման ծախսերը և 16.14%-ով կրճատվել են վարչական ծախսերը:

2008թ. ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում հաշվետու տարվա վնասը կազմել է 92 միլիոն 043.հազ.դրամ:

Ընկերությունը շահութահարկի գծով առ 01.01.09 թվականի դրությամբ ունի 62 միլիոն 234.0 հազ. դրամ գերավճար, 2008թ-ի ընթացքում պետբյուջե է փոխանցվել 10 միլիոն 533.0 հազ. դրամ շահութահարկ: Իսկ ԱԱԳ-ի գծով Ընկերության գերավճարը պետբյուջեին կազմում է 56 միլիոն 446.2 հազ.դրամ:

Ակտիվների շրջանառելիության գործակիցը 0.22 է, իսկ ընթացիկ ակտիվների շրջանառելիության գործակիցը 0.27 է, պատրաստի արտադրանքի շրջանառելիության գործակիցը 1.02:

Անկախության գործակիցը –պասիվների մեջ սեփական կապիտալի մասը 0.80 է, իրաց-վելիության գործակիցը-ընթացիկ ակտիվները ինչ աստիճանով են ծածկում կարճաժամկետ պար-տավորությունները-4.92 է :

Ընկերությունը բյուջեյի, սոցապի նկատմամբ պարտավորությունները կատարում է ժամանակին:

Գլխավոր հաշվապահ-

Ա.Սակարյան

Հաշվետվություն

«ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ-ի

Վերստուգող հանձնաժողովի 2008 թվականի

«ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ Վերստուգող հանձնաժողովի 16.03.2009թ. նիստի որոշման (արձանագրության թիվ 2) համաձայն «ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ-ի 2008 թվականի տարեկան հաշվապահական հաշվեկշռում և ֆինանսական հաշվետվություններում ներկայացված տեղեկատվության արժանահավատությունը ճշտելու նպատակով ընկերության Վերստուգող հանձնաժողովի կողմից իրականացվել է ընկերության հաշվետվություններում և ֆինանսական փաստաթղթերում բովանդակվող տեղեկությունների հավաստիության ստուգում: Ստուգումը սկսվել է 2009թ. մարտի 16-ին և ավարտվել մարտի 27-ին:

Ստուգմանը պարզվեց.

Ընկերությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է՝

Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքով /այսուհետ՝ Օրենսգրք/, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության օրենսդրական այլ ակտերով և իր կանոնադրությամբ:

Ընկերության գործունեության հիմնական տեսակներն են՝ պերճանքի առարկաների, ոսկերչական իրերի և թանկարժեք զարդեղենի, ժամացույցների, թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի, կիսաֆաբրիկատների արտադրություն և վաճառք, նոր տեխնոլոգիաների մշակում, մասնագետների ուսուցման, վերապատրաստման, ցուցահանդեսների և տոնավաճառների կազմակերպում:

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 10 348 896 000 դրամ, որը կազմում է 10 348 896 հատ սովորական անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի

անվանական արժեքը կազմում է 1000 դրամ: Բոլոր 10 348 896 բաժնետոմսերը տեղաբաշխված են բաժնետերերի միջև և լրիվ վճարված են նրանց կողմից, ընդ որում 8 279 117 սովորական անվանական բաժնետոմսեր (80 տոկոսը) համարվում են պետական սեփականություն (տնօրինվում են ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից), իսկ 2 069 779 սովորական անվանական բաժնետոմսեր (20 տոկոսը) սեփականության իրավունքով պատկանում են մասնակի անհատույց սեփականաշնորհման մասնակիցներին:

Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը բաժնետերերի ընդհանուր ժողովն է, ընդհանուր ղեկավարումն իրականացնում է տնօրենների խորհուրդը, իսկ գործունեության ղեկավարումն իրականացնում է գլխավոր տնօրենը:

Ընկերության կառուցվածքում հաշվապահությունը գործում է որպես առանձին ստորաբաժանում:

2008 թվականին Ընկերությունը գույքի, պարտավորությունների և տնտեսական գործառնությունների հաշվառումը վարում է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից 2000թ. դեկտեմբերի 29-ի թիվ 319 հրամանով հաստատված կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման հաշվային պլանին համապատասխան կազմված աշխատանքային հաշվային պլանի, «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, հաշվապահական հաշվառմանը վերաբերող այլ օրենքների, ՀՀՀՀՍ և հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական այլ ակտերի համաձայն:

Հաշվապահական հաշվառման կազմակերպման համար պատասխանատու է գլխավոր տնօրենը:

Ընկերությունում հաշվապահական հաշվառումն իրականացվում է 1C-Ջեռնարկություն հաշվապահական ծրագրով:

Վերստուգող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է ղեկավար մարմինների որոշումների կատարման ընթացքը, ստուգվել են փաստաթղթերի համապատասխանությունը օրենքներին: Արձանագրվել են որոշ թերություններ հաշվապահական հաշվառման և ինքնարժեքի հաշվարկման ձևակերպման մեջ, որոնք ընթացքում ճշտվել են:

Ընկերությունում պարբերաբար չեն վերանայվել հիմնական միջոցների միավորների օգտակար ծառայության ժամկետները: Հիմնական միջոցների կազմում առկա են զրոյական արժեքներով հիմնական միջոցներ:

Ընկերության կողմից չի կիրառվել ՀՀՀՅՍ 16-ի պահանջները, որի արդյունքում 01.01.2009թ. դրությամբ Ընկերությունում ձեռք բերման արժեքով որպես սեփականություն հաշվառված հիմնական միջոցներից 112223.3 հազ. դրամ հիմնական միջոցները մնացորդային արժեք չունեն: Անհրաժեշտ է հաշվապահական հաշվառման քաղաքականությունում կատարել փոփոխություն և հիմնական միջոցների միավորը որպես ակտիվ սկզբնական ճանաչումից հետո հաշվառել թույլատրելի այլընտրանքային մոտեցմամբ և իրականացնել հիմնական միջոցների որոշ խմբերի վերագնահատում:

Համաձայն Ընկերության 2008թ. դեկտեմբերի 22-ի թիվ 127 հրամանի՝ **գույքագրման** հանձնաժողովի կողմից իրականացվել է հիմնական միջոցների և ապրանքանյութական արժեքների գույքագրում: Գույքագրման աշխատանքները սկսվել է 2008թ. դեկտեմբերի 25-ին, վարտվել է 2009թ. հունվարի 15-ին,:

Գույքագրման արդյունքների վերաբերյալ հանձնաժողովի կողմից կազմվել և ներկայացվել են ցուցակներ, որտեղ նշվել են՝ հիմնական միջոցի անվանումը, տիպը, մարկան, գույքային համարը, փաստացի քանակը, վիճակը:

Գույքագրման գործընթացի ուսումնասիրություններից պարզվեց հետևյալը՝

ա/ գույքագրման արդյունքները կազմվել և ներկայացվել են ռուսերեն բլանկների վրա,

բ/ առկա են դեպքեր, երբ մեկ բաժնի հիմնական միջոցները գրանցվել են մեկ այլ բաժնում, որի համար սակայն չկան համապատասխան հաշվառումը հիմնավորող փաստաթղթեր,

գ/ գույքագրման ցուցակներում առանձին դեպքերում բացակայում են գույքահամարները, գրառումներում կան ջնջումներ, կան մատիտով գրառումներ,

դ/ առանձին դեպքերում գույքագրման ցուցակներում մեկ տողում նշվել են մեկից ավելի գույքային համարներ ունեցող հիմնական միջոցներ,

ե/ գույքագրման արդյունքներով արձանագրվել է 573573,5 դրամ ոսկու և 101427,9 դրամ արծաթի պակասորդ, որից համապատասխանաբար ենթակա է վերականգման 79500,0 դրամ ոսկի և 23253,8 դրամ արծաթ, ընդամենը ենթակա է վերականգման 102753,8 դրամ գումար, իսկ 572247,7 դրամ գումարը ձևակերպվել է որպես

արտադրության անվերադարձ կորուստ: 01.01.2009 թվականի դրությամբ վերականգնվել է 54714,0 դրամ գումար:

Ընկերության գույքագրման հանձնաժողովի կողմից խախտվել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 2000թ. հունիսի 2-ի «կազմակերպությունների ակտիվների և պարտավորությունների պարտադիր գույքագրման կարգը» հաստատելու մասին թիվ 102 հրամանի պահանջները:

Չետաձգված հարկային ակտիվներ հաշվի մնացորդը ամբողջությամբ առաջացել է 1% նվազագույն շահութահարկի ճշգրտումից, որը 01.01.2009թ.-ի դրությամբ կազմում է 59763.8 հազ. դրամ :

01.01.2008թ. դրությամբ դեբիտորական պարտքերը վաճառքների գծով կազմել է 1885139.1 հազ դրամ, իսկ 01.01.2009թ. դրությամբ այն կազմել է 2419959,0 հազ.դրամ:

Ընկերության կողմից տրված ընթացիկ կանխավճարները 01.01.2009թ. դրությամբ կազմել է 12489,0 հազ.դրամ : Ընկերությունում անհուսալի դեբիտորական պարտքերի դուրս գրման համար պահուստ չի ստեղծվում:

2008թ.-ին Ընկերությունը գործարքները իրականացրել է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ, Ինեկորբանկ ՓԲԸ, Յունիբանկ ՓԲԸ և ԲՏԱ ինվեստ բանկ ՓԲԸ հետ:

Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների իրացումից հասույթը կազմել է 935324,0 հազ.դրամ, այլ ոչ գործառնական եկամուտները կազմել են 111589,0 հազ.դրամ: Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեքը կազմել է 844999,0 հազ.դրամ, իսկ այլ գործառնական գործունեությունից՝ 89273,0 հազ.դրամ: 2008 թվականին «ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ-ի վնասը կազմել է 92046,0 հազ. դրամ:

01.01.2009թ. դրությամբ շահութահարկի գծով Ընկերությունը պարտք ու պահանջ չունի, իսկ ԱԱՀ-ի գծով Ընկերության գերավճարը պետբյուջեին կազմել է 56107,0 հազ.դրամ: 01.01.2009թ. դրությամբ գույքահարկի և եկամտահարկի գծով Ընկերությունը պետբյուջեի նկատմամբ պարտք և պահանջ չունի:

Ֆինանսական կայունության վերլուծություն

1. Ֆինանսական անկախության գործակիցը ցույց է տալիս, թե ընկերության ընդհանուր միջոցների որ մասն է ձևավորվել սեփական կապիտալի հաշվին: Այլ կերպ,

այն սեփական կապիտալի տեսակարար կշիռն է կազմակերպության ընդհանուր կապիտալում:

$$Q_1 = \frac{\text{Սեփական կապիտալ}}{\text{Հաշվեկշռի հանրագումար}} = \frac{3653485}{4565840} = 0,80$$

Այս ցուցանիշի ցանկալի փոքրագույն մակարդակը կազմում է 0.5:

2. Պարտավորությունների և սեփական կապիտալի հարաբերակցության գործակիցը իր իմաստով մոտ է նախորդ գործակիցին և ցույց է տալիս, թե սեփական կապիտալի միավորի հաշվով որքան պարտավորություններ ունի կազմակերպությունը:

$$Q_2 = \frac{\text{Պարտավորություններ}}{\text{Սեփական կապիտալ}} = \frac{912355}{3663485} = 0,25$$

Այս ցուցանիշի ցանկալի փոքրագույն մակարդակը կազմում է 1:

3. Ինքնավարության գործակիցը ցույց է տալիս, թե կազմակերպության միջոցների որ մասն է ձևավորվել երկարաժամկետ ներգրավված աղբյուրների հաշվին:

$$Q_3 = \frac{\text{Սեփական կապիտալ} + \text{Երկարաժամկետ պարտավորություններ}}{\text{Հաշվեկշռի հանրագումար}} = \frac{3810749}{4565840} = 0,83$$

Այս գործակիցը ավելի մեղմ է, քան ֆինանսական անկախության գործակիցը, դրա իջեցումը դիտվում է որպես բացասական երևույթ, քանի որ իր միջոցների ֆինանսավորման համար արդեն սկսել է ներգրավել միջոցներ կարճաժամկետ հիմունքներով:

4. Գործող կապիտալ: Այն ցույց է տալիս, թե ընթացիկ ակտիվների որ մասն է ապահովված սեփական կապիտալով և երկարաժամկետ պարտավորություններով կամ երկարաժամկետ հիմունքներով ներգրավված միջոցների որ մասն է ուղղված ընթացիկ ակտիվների ֆինանսավորմանը:

$$Q_4 = \text{Ընթացիկ ակտիվներ-Կարճ պարտավորություններ} \quad 3718287 - 755091 = 2963196$$

5. Ընթացիկ ակտիվների՝ գործող կապիտալով ապահովվածության գործակից: Այն ցույց է տալիս, թե ընկերության ընթացիկ ակտիվների որ մասն է ձևավորվել սեփական կապիտալի և երակարաժամկետ պարտավորությունների հաշվին:

$$q_5 = \frac{\text{Գործող կապիտալ}}{\text{Ընթացիկ ակտիվներ}} = \frac{2963196}{3718287} = 0,80$$

Այս ցուցանիշի նորմատիվային փոքրագույն արժեքը կազմում է 0,1:

6. Պաշարների գործող կապիտալով ապահովվածության գործակից: Այն ցույց է տալիս ընկերության ապրանքանյութական պաշարների որ մասն է ձևավորվել սեփական կապիտալի և երկարաժամկետ պարտավորությունների հաշվին:

$$q_6 = \frac{\text{Գործող կապիտալ}}{\text{Պաշարներ}} = \frac{2963196}{1167250} = 2.54$$

7. Սեփական կապիտալի մաներայնության գործակից: Այն ցույց է տալիս, թե ընկերության սեփական կապիտալի հաշվին ձևավորված միջոցների որ մասն է գտնվում շարժունակ (մոբիլ) վիճակում:

$$q_7 = \frac{\text{Գործող կապիտալ}}{\text{Սեփական կապիտալ}} = \frac{2963196}{3653485} = 0,81$$

1. հաշվեկշռի իրացվելիության վերլուծությունը:

Իրացվելիությունը բնութագրող ցուցանիշներն են.

1. Ընթացիկ իրացվելիության գործակից: Այն ցույց է տալիս ընկերության կարճաժամկետ պարտավորությունների ընթացիկ ակտիվներով ապահովվածության աստիճանը և որոշվում է ընթացիկ ակտիվների և կարճաժամկետ պարտավորությունների հարաբերությամբ:

$$q_8 = \frac{\text{Ընթացիկ ակտիվներ}}{\text{Կարճաժամկետ պարտավորություններ}} = \frac{3718287}{755091} = 4,92$$

Այս ցուցանիշի սահմանային նվազագույն արժեքը 2 է:

2. Արագ իրացվելիության գործակից: Այն ցույց է տալիս կարճաժամկետ պարտավորությունների առավել իրացվելի ակտիվներով ապահովվածության

աստիճանը և որոշվում է առավել իրացվելի ակտիվների (դրամական միջոցներ, կարճաժամկետ ֆինանսական ներդրումներ, դեբիտորական պարտք) և կարճաժամկետ պարտավորությունների հարաբերությամբ:

$$Q9 = \frac{\text{Արագ իրացվելի ընթացիկ ակտիվներ}}{\text{Կարճաժամկետ պարտավորություններ}} = \frac{2474919}{755091} = 3,28$$

Այս ցուցանիշի սահմանային փոքրագույն արժեքը 1 է:

Ընկերության 2008 թվականի տարեկան հաշվետվություններում և ֆինանսական փաստաթղթերում բովանդակվող տեղեկությունների հավաստիության ստուգման աշխատանքները պետք է նշել, որ դեռևս առկա են բացթողումներն ու թերացումները ներքին հսկողության համակարգում և հաշվապահական հաշվառման գործընթացներում:

1.Ներքին վերահսկողության համակարգ.

ա/ առկա են թերացումներ Ընկերության գործունեության վերաբերյալ բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումներով և նախորդ ստուգումներով առաջադրանքների կատարման գործընթացում,

բ/ թույլ է հսկողությունը խնայողության ռեժիմի և ֆինանսական կարգապահության պահպանման նկատմամբ,

գ/ ակտիվների և պարտավորությունների գույքագրումները /եռամսյակային և տարեկան / կատարվում են գործող կարգի պահանջների խախտումներով:

2. Հաշվապահական հաշվառման գործընթացներ.

ա/ թույլ է հսկողությունը ծախսերը հիմնավորող փաստաթղթերի նկատմամբ,

բ/ թույլ է հսկողությունը առհաշիվ տրված և ծախսված գումարների նկատմամբ,

գ/ հաշվապահական հաշվառման քաղաքականության առանձին կետեր ենթակա են վերանայման:

Մեր կարծիքով առ 1-ը հունվարի 2009թ.-ի դրությամբ, ֆինանսական հաշվետվությունները Ընկերության ֆինանսական վիճակի, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների ու դրամական հոսքերի մասին տալիս են իրական պատկերը (կամ բոլոր էական առումներով ճիշտ են ներկայացված)՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Հաշվապահական Հաշվառման Ստանդարտների:

Վերստուգող հանձնաժողովը գտնում է, որ ստեղծված իրավիճակից դուրս գալու համար պետք է ուժեղացվի ընկերության ֆինանսական կառավարումը, մշակվի մարքեթինգի քաղաքականության հայեցակարգ, վարվի գնային ճկուն քաղաքականություն, իրականացվի ոսկու կորստի ապահովագրման քաղաքականություն՝ օգտագործելով ֆինանսական անհրաժեշտ գործիքներ արտարժույթի փոխարժեքի փոփոխման հետևանքներն ընկերությանը քիչ խոցելի դարձնելու համար, միջոցներ ձեռնարկվի հաստատուն ծախսերը կրճատելու ուղղությամբ:

Վերստուգող հանձնաժողովի

նախագահ

Ա. Մկրտչյան

30.06.2009

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 1

« Երևանի ոսկերչական գործարան» Բաց Բաժնետիրական Ընկերության
 Բաժնետերերի ընդհանուր տարեկան 30.06.09թ. Ժողովի կողմից
 ընտրված հաշվիչ հանձնաժողովի միատի

Ժողովին մասնակցում էին 14 բաժնետերեր կան նրանց լիազոր
 ներկայացուցիչներ, որոնք բաժնետոմսերի ընդհանուր քանակությունից
 / 10 348 896 հատ / հանդիսանում են 8.306.718 բաժնետոմսի սեփականատեր,
 կան ժողովին ներկա էին 80,27% ձայնի իրավունք ունեցող բաժնետերեր, ինչն
 ապահովում է քվորումը:

Հանձնաժողովի անդամներ՝

Խ. Հովսեփյան

Մ. Մկրտչյան

Հ. Պողոսյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 2

« Երևանի ոսկերչական գործարան» Բաց Բաժնետիրական Ընկերության
բաժնետերերի ընդհանուր տարեկան 30.06.09թ. Ժողովի կողմից
ընտրված հաշվիչ հանձնաժողովի նիստի

Նախօրոք բաժանված քվեաթերթիկների հաշվառումը ցույց տվեց հետևյալ արդյունքները՝ (առկա 8306718 ձայների քանակից)

1. Ընկերության գործնության 2008թ. տարեկան հաշվետվության հաստատումը՝
կողմ - 8.306.718 դեմ - 0 ձեռնպահ - 0

Ընկերության 2008թ. տարեկան գործնությունը հաստատվեց:

2. Ընկերության 2008 թվականի տարեկան ֆինանսատնտեսական գործնության հաստատումը՝
կողմ - 8.306.718 դեմ - 0 ձեռնպահ - 0

Ընկերության 2008թվականի տարեկան ֆինանսատնտեսական գործնությունը հաստատվեց:

3. Ընկերության շահույթի և վնասի հաշվի հաստատումը՝
կողմ - 8.306.718 դեմ - 0 ձեռնպահ - 0

Ընկերության շահույթի և վնասի հաշիվը հաստատվեց:

4. Ընկերության 2009թվականի ֆինանսական արդյունքների աուդիտն իրականացնող անձի ընտրության համար նրցույթ հայտարարելու որոշման հաստատումը՝
կողմ - 8.306.718 դեմ - 0 ձեռնպահ - 0

5. Տնօրենների խորհրդի անդամների ընտրության արդյունքում, որը կատարվել է գումարային (կոմուլյատիվ) ձևով բաժնետերերը իրենց ծայները բաշխել են հետևյալ կերպ՝

1. Է. Գրիգորյան կողմ՝ 8.306.718
2. Գ. Հովհաննիսյան կողմ՝ 8.306.718

Ընկերության տնօրենների խորհրդի անդամների հետևյալ թեկնածուները ընտրվել են՝

1. Էմիլ Գրիգորյան
2. Գարիկ Յովհաննիսյան

Հանձնաժողովի անդամներ՝

Խ. Հովսեփյան

Մ. Սկրտչյան

Հ. Պողոսյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 3

« Երևանի ոսկերչական գործարան» Բաց Բաժնետիրական Ընկերության
 Բաժնետերերի ընդհանուր տարեկան 30.06.09թ. ժողովի կողմից
 ընտրված հաշվիչ հանձնաժողովի նիստի

Ժողովին մասնակցում էին 14 բաժնետերեր կամ նրանց լիազոր
 ներկայացուցիչներ, որոնք բաժնետոմսերի ընդհանուր քանակությունից
 / 10 348 896 հատ / հանդիսանում են 8.306.718 բաժնետոմսի սեփականատեր,
 կամ ժողովին ներկա էին 80,27% ձայնի իրավունք ունեցող բաժնետերեր, ինչն
 ապահովում է քվորումը:

Նախօրոք բաժանված քվեաթերթիկների հաշվառումը ցույց տվեց, որ
 օրակարգի առաջին վեց հարցերը բաժնետերերը հաստատել են հետևյալ կերպ.

1. կետ – կողմ 8.306.718 ձայն
2. կետ – կողմ 8.306.718 ձայն
3. կետ – կողմ 8.306.718 ձայն
4. կետ – կողմ 8.306.718 ձայն
5. կետ – կողմ 8.306.718 ձայն
6. կետ – Քանի որ տնօրենների խորհրդի անդամները ընտրվում են գումարային
 /կումուլյատիվ/ ձևով, բաժնետերերն իրենց ձայները բաշխել են հետևյալ կերպ.

Տնօրենների խորհրդի անդամներ՝

1. Է. Գրիգորյան	կողմ՝	8.306.718
2. Գ. Հովհաննիսյան	կողմ՝	8.306.718
3.		
4.		
5.		

Հանձնաժողովի անդամներ՝ Խ. Հովսեփյան

Հ. Պողոսյան

Մ. Սկրտչյան

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է

«Երևանի ոսկերչական գործարան»
բաց բաժնետիրական ընկերության
տնօրենների խորհրդի կողմից
արձանագրության համարը 1Խ-09
12.06.09թ.

տնօրենների խորհրդի նախագահ
Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

**«Երևանի ոսկերչական գործարան» բաց բաժնետիրական ընկերության
բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի**

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

30 հունիսի 2009թ.

1. Ընկերության 2008թ. գործունեության տարեկան հաշվետվության հաստատում:
2. Ընկերության 2008թ. ֆինանսական գործունեությունն ամփոփող տարեկան հաշվետվության հաստատում:
3. Ընկերության շահույթի և վնասի հաշվետվության հաստատում:
4. Ընկերության Վերստուգող հանձնաժողովի հաշվետվության հաստատում:
5. 2009թ. Ընկերության ֆինանսական գործունեության աուդիտ իրականացնող անձի հաստատում:
6. Ընկերության տնօրենների խորհրդի անդամների ընտրություն:

« Երևանի ոսկերչական գործարան » Բ Բ Ը

N	Անուն, ազգանուն	Ծննդյան թիվը	Քաղ.	Մասնագիտ.	Պաշտոնը	Սով.բաժնե տոմս. «ԵՈԳ» ԲԲԸ
Տնօրենների խորհրդի անդամների թեկնածուներ						
1.						
2.						
3.						
4.						
5.						

Ք Վ Ե Ա Թ Ե Ր Թ Ի Կ

«Երևանի ոսկերչական գործարան» Բաց Բաժնետիրական Ընկերություն.

----- 30 հունիսի 2009թ
բաժնետերերի /լիազորված անձի/ անուն, ազգանուն ձայների/բաժնետոմսերի/թիվը

ՀԱՐՑ 1. «Երևանի ոսկերչական գործարան» ԲԲԸ 2008թ. տարեկան հաշվետվության հաստատում:
ԿՈՂՄ ԴԵՄ ՁԵՌՆՊԱՀ

ՀԱՐՑ 2. «Երևանի ոսկերչական գործարան» ԲԲԸ 2008 թ. ֆինանսական գործունեությունը ամփոփող տարեկան հաշվետվության հաստատում:
ԿՈՂՄ ԴԵՄ ՁԵՌՆՊԱՀ

ՀԱՐՑ 3. «Երևանի ոսկերչական գործարան» ԲԲԸ շահույթի և վնասի հաշվետվության հաստատում:
ԿՈՂՄ ԴԵՄ ՁԵՌՆՊԱՀ

ՀԱՐՑ 4. «Երևանի ոսկերչական գործարան» ԲԲԸ Վերստուգող հանձնաժողովի հաշվետվության հաստատումը:
ԿՈՂՄ ԴԵՄ ՁԵՌՆՊԱՀ

ՀԱՐՑ 5. «Երևանի ոսկերչական գործարան» ԲԲԸ 2009թվականի գործունեության ֆինանսական արդյունքների աուդիտն իրականացնող անձ «Հայաուդիտ» ՍՊ Ընկերության հաստատումը:
ԿՈՂՄ ԴԵՄ ՁԵՌՆՊԱՀ

ՀԱՐՑ 6. «Երևանի ոսկերչական գործարան» ԲԲԸ տնօրենների խորհրդի անդամների ընտրություն հետևյալ կազմով:

ԳՈՒՄԱՐԱՅԻՆ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՁԱՅՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ x 5 =

	ձայն
	ձայն
	ձայն
	ձայն
	ձայն

..... ԲԱԺՆԵՏԻՐՈՋ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ա.թ. հունիսի 30 -ին, ժամը 15⁰⁰ «ԵՈԳ» ԲԲԸ (Արշակունյաց 12) տեղի կունենա «Երևանի ոսկերչական գործարան» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. Ընկերության 2008թ. գործնության տարեկան հաշվետվության հաստատում:
2. Ընկերության 2008թ. ֆինանսական գործունեությունը ամփոփող տարեկան հաշվետվության հաստատում:
3. Ընկերության շահույթի և վնասի հաշվի հաստատում:
4. Ընկերության Վերստուգող հանձնաժողովի հաշվետվության հաստատում:
5. Ընկերության 2009թ. ֆինանսական գործնության աուդիտ իրականացնող անձի հաստատում:
6. Տնօրենների խորհուրդի անդամների ընտրություն:

Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կկազմվի 22.06.2009թ.:

Տնօրենների խորհրդի կողմից առաջադրվող վերստուգող հանձնաժողովի և Ընկերության տնօրենների խորհրդի անդամների թեկնածուների մասին տեղեկություններ կարող եք ստանալ **ս.թ. հունիսի 22-ից** գործարանի անցատնակում (Արշակունյաց 12):

Այլ տեղեկությունների համար դիմել «Երևանի ոսկերչական գործարան» ԲԲԸ, հեռ. 52-53-21:

Ընկերության տնօրենների խորհուրդ

Τ Α Υ Β Α Ε Α Γ Ε Α

30 **июнү** **п.а.** **а 15⁰⁰** а çàèå ЕЮЗ ОАО (óë. Аршакуняц 12) **пӱ пӱтӱ èòпӱ**
аӱ аӱ аӱ а **т а̀уа̀а** **пӱ а̀дӱаӱ èå** **а̀èèèтӱ а̀дӱ а** „**А̀дӱа̀аӱ пӱèèè** **пӱа̀èèèдӱтӱ è** **çàаӱ ä,**
а̀èèèèтӱ а̀дӱтӱ аӱ **т а̀уа̀пӱòåå** **т̀èèдӱòтӱ аӱ** **òèтӱ а.**

Т а̀тӱ а̀пӱòèå **аӱтӱ:**

1. Óòååðæååáí èå **аӱ аӱ аӱ аӱ** **т̀÷,** **òå** **åå̀у̀òå̀èтӱтӱ** **пӱòè** **т а̀уа̀пӱòåå** **çå** **2008å.**
2. Óòååðæååáí èå **аӱ аӱ аӱ аӱ** **т̀÷,** **òå** **òèтӱ аӱ пӱ аӱ è** **åå̀у̀òå̀èтӱтӱ** **пӱòè** **т а̀уа̀пӱòåå** **çå** **2008å.**
3. Óòååðæååáí èå **т̀÷,** **òå** **т̀èåå̀у̀èè(óå̀у̀òèтӱ а)** **т а̀уа̀пӱòåå.**
4. Óòååðæååáí èå **ò÷,** **òå** **контрòльнòй комиссии общесва.**
5. Óòååðæååáí èå èèòå, **т̀дӱ аӱ å̀у̀ååáí** **åóåèò** **òèтӱ аӱ пӱ аӱ è** **åå̀у̀òå̀èтӱтӱ** **пӱòè** **т а̀уа̀пӱòåå** **çå** **2009å.**
6. **А̀уа̀áí дӱ ÷èáíтӱ а** **Нӱтӱ åå̀òå** **åèðåèèòтӱ дӱ а.**

Нӱтӱ èпӱ è **а̀èèèèтӱ а̀дӱтӱ а,** **èтӱ а̀пӱèèò** **т̀ðåáí** **ó÷å̀пӱòǻí åå̀òå̀** **т а̀** **пӱ а̀дӱаӱ èè,** **åóåå̀ò** **пӱ пӱòååèáí** **22.06.2009å.**

Нӱåååáí è̀у̀ **т** **èáí åèåå̀òå̀ò** **å** **÷èáíтӱ èтӱт̀дӱèтӱтӱ è** **èтӱт̀èпӱèè** **è** **÷èáíтӱ пӱ åå̀òå** **åèðåèèòтӱ дӱ а** **т а̀уа̀пӱòåå,** **т̀ðååèтӱ æáíтӱå** **пӱ åå̀òтӱ** **åèðåèèòтӱ дӱ а,** **т̀тӱæтӱт** **т̀т̀èó÷èòå̀** **п** **22-áí** **т å̀у̀** **п.а.** **å** **т̀дӱòтӱ аӱтӱ è** **çåáí åå** (**А̀ðåèèóíтӱ ýö,** **12.**).
Çå **пӱ ðååèèè** **è** **т а̀ðå̀å̀òå̀òå̀пӱ å** **Т А́** **„А̀дӱа̀åáí пӱèèèè** **пӱа̀èèèèдӱтӱ è** **çåáí ä,** **òå̀è.: 52-53-21.**

Нӱтӱ åå̀ò åèðåèèòтӱ дӱ а **т а̀уа̀пӱòåå.**